Տրամադրեք մեզ ձեր ռասայական և էթնիկ պատկանելության տվյալները և օգնեք մեզ բարելավել ծառայությունն ու հասանելիությունը

Securing today and tomorrow

Դուք դիմում եք նոր Social Security(Սոցիալական ապահովության) համարի քարտի, թե՞ այն փոխարինելու համար:

Ձեր ռասայական և էթնիկ պատկանելության մասին տեղեկությունները մեզ օգնում են իմանալ՝ արդյոք մենք անաչառ ծառայություններ ենք մատուցում բոլորին, ովքեր դիմում են մեզ օգնության համար: *Այս տեղեկությունների տրամադրումը կամավոր է և դա չի ազդի ձեր դիմումի վրա:*

Ճնորհակալություն, որ օգնում եք մեզ բարելավել ծառայությունն ու հասանելիությունը: Այդ տեղեկությունները մենք օգտագործում ենք հետազոտության և վիճակագրական նպատակներով. Այդպիսի օրինակներ կարող եք գտնել հետևյալ կայքում՝ ***ssa.gov/policy/about/racial-equity-resources.html*** (հասանելի է միայն անգլերենով):

Ինչպե՞ս է այս տեղեկատվությունն օգնում ինձ:

Այս տեղեկություններն օգնում են մեզ համոզված լինել, որ մենք ազնիվ և անաչառ ծառայություն ենք մատուցում բոլորին: Նաև օգնում են մեզ ընդլայնել հասանելիությունը մեր ծրագրերին և տեղեկացնում են մեզ, թե.

- **Ում** են օգնում մեր նպաստի վճարումները:
- **Ովքեր** կարող են անտեղյակ լինել նպաստներից, որոնց համար նրանք կարող են իրավասու լինել:
- **Ինչ** չնախատեսված խոչընդոտներ կարող են ազդել նպաստների և ծառայությունների վրա:
- **Որտեղ** ընդլայնել տեղեկատվական աշխատանքները և բարձրացնել իրազեկությունը ծրագրի վերաբերյալ:

Privacy Act Statement(Հայտարարություն Գաղտնիության օրենքի մասին). Social Security Act-ի (Սոցիալական ապահովության մասին օրենք) Բաժին 702-ի փոփոխության համաձայն՝ թույլատրվում է Social Security-ին (Սոցիալական ապահովություն) հավաքել ռասայական և էթնիկ պատկանելության մասին տեղեկությունները, որոնք մենք օգտագործելու ենք հետազոտության և վիճակագրական նպատակներով: Տեղեկությունների տրամադրումը կամավոր է. տեղեկությունները չտրամադրելու կամ մասնակի տրամադրելու դեպքում ոչ մի ազդեցություն չի ունենա ձեզ վրա: Համաձայն օրենքի՝ Social Security-ն (Սոցիալական ապահովություն) կարող է օգտագործել և փոխանցել ձեր ներկայացրած տեղեկություններն այլ մարմիններին: Մենք կարող ենք տրամադրել դրանք այլ դաշնային գործակալություններին, կապալառուներին, դրամաշնորհառուներին, ուսանող կամավորներին և այլոց, ինչպես նշված է System of Records Notice-ի (Գրառումների համակարգի ծանուցում) (SORN,անգլերեն հապավումը) սովորական օգտագործման մեջ, 60-0104 բաժնում, որը հասանելի է հետևյալ կայքում՝ ***www.ssa.gov/privacy*** (հասանելի է միայն անգլերենով):

Social Security Administration | Publication No. 17-020-AM | June 2023 | Արտադրվել է ԱՄՆ հարկատուների հաշվին